ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

« 25 » դեկտեմբեր 2024թ. No 7533 - Ա

ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ՄԱԿԼԵՈԴՍ ՖԱՐՄԱՍՅՈՒՏԻԿԱԼՍ ՍՊԸ, ՖԵՅՍ-II, ՊԼՈՏ NO 25-27, ՍՌ. NO 366, ՊՐԵՄԻԵՐ ԻՆԴ. ԻՍՏԵՅՏ, ԿԱՉԻԳԱՄ, ԴԱՄԱՆ-396210 ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ, ԴԵՂԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՎԱՍՏԱԳՐԻ ԻՐԱՎԱՏԵՐ՝ ՄԱԿԼԵՈԴՍ ՖԱՐՄԱՍՅՈՒՏԻԿԱԼՍ ՍՊԸ, 304, ԱՏԼԱՆՏԱ ԱՐԿԱԴ, ՄԱՐՈԼ ՉԵՐՉ ՌՈԱԴ,ԱՆԴՀԵՐԻ (ԻՍՏ), ՄՈՒՄԲԱՅ-400 059, ՀՆԴԿԱՍՏԱՆ «ԷԹԱՄԲՈՒՏՈԼԻ ՀԻԴՐՈՔԼՈՐԻԴ, ԷԹԱՄԲՈՒՏՈԼ (ԷԹԱՄԲՈՒՏՈԼԻ ՀԻԴՐՈՔԼՈՐԻԴ) ԴԵՂԱՀԱՏԵՐ ԹԱՂԱՆԹԱՊԱՏ 100ՄԳ; (100/10X10/) ԲԼԻՍՏԵՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԵՂԻ ՎԵՐԱԳՐԱՆՑՈՒՄԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Դեղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 16-րդ մասի և 27-րդ մասի 7-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի N 162-Ն որոշման հավելված 1-ի 40-րդ կետը, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության փորձաքննության 17.12.2024 թվականի EL 01/3645-24 բացասական եզրակացությունը՝ Հնդկաստանի Մակլեոդս Ֆարմայուտիկալս ՍՊԸ, Ֆեյս-II, Պլոտ No 25-27, Սռ. No 366, Պրեմիեր Ինդ. Իստեյտ, Կաչիգամ, Դաման-396210 արտադրության, դեղի գրանցման հավաստագրի իրավատեր՝ Մակլեոդս Ֆարմայուտիկալս ՍՊԸ , 304, Ատլանտա Արկադ, Մարոլ Չերչ Ռոադ,Անդհերի (Իստ), Մումբայ-400 059, Հնդկաստան «Էթամբուտոլի հիդրոքլորիդ, էթամբուտոլ (էթամբուտոլի հիդրոքլորիդ) դեղահատեր թաղանթապատ 100մգ; (100/10x10/) բլիստերում դեղի անվտանգության, արդյունավետության և որակի գնահատման վերաբերյալ փորձագիտական թիվ 22609 առ 16.12.2024թ. բացասական եզրակացությունը, դեղի վերագրանցումը մերժվում է քանի, որ դեղի լիարժեք փորձաքննություն իրականացնելու համար անհրաժեշտ նյութերը չեն ներկայացվել: Համաձայն «Դեղերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 16-րդ մասի և 27-րդ մասի 7-րդ կետի՝ դեղի վերագրանցումը մերժվում է:

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1.Մերժել Հնդկաստանի Մակլեոդս Ֆարմասյուտիկալս ՍՊԸ, Ֆեյս-II, Պլոտ No 25-27, Սռ. No 366, Պրեմիեր Ինդ. Իստեյտ, Կաչիգամ, Դաման-396210 արտադրության, դեղի գրանցման հավաստագրի իրավատեր՝ Մակլեոդս Ֆարմասյուտիկալս ՍՊԸ , 304, Ատլանտա Արկադ, Մարոլ Չերչ Ռոադ,Անդիերի (Իստ), Մումբայ-400 059, Հնդկաստան «Էթամբուտոլի հիդրոքլորիդ, էթամբուտոլ (էթամբուտոլի հիդրոքլորիդ) դեղահատեր թաղանթապատ 100մգ; (100/10x10/) բլիստերում դեղի վերագրանցումը Հայաստանի Հանրապետությունում:

2. ՀՀ առողջապահության նախարարության քարտուղարության պետ Ա. Առաքելյանին՝

1) սույն հրամանը 2-օրյա աշխատանքային օրվա ընթացքում պատշաճ ձևով էլեկտրոնային փոստի միջոցով՝ առաքել հայտատուին:

3. Սույն հրամանը ուժի մեջ է մտնում վարչական վարույթի մասնակցին իրազեկելուն հաջորդող օրվանից:

4. Սույն հրամանը կարող է բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70-րդ և 71-րդ հոդվածներով սահմանված կարգով և ժամկետներում՝ վարչական կարգով կամ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով և ժամկետներում՝ դատական կարգով:

Recoverable Signature

X

ԱՆԱՀԻՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Signed by: AVANESYAN ANAHIT 7103810157

Ա.ԱՎԱՆԵՍՅԱՆ